

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՉԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Գենիկ Կարապետյան	տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն	Որպես տնօրենների խորհրդի նախագահ՝ տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար, որպես գլխավոր տնօրեն՝ ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Դավիթ Կարապետյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Լյովա Եղիրազարյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Ջիվան Գյուլումյան	Գլխավոր ինժիներ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Եղիշե Ստեփանյան	Գլխավոր ինժինների տեղակալ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Սիլվա Խաչատրյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Աուդիտ Սթար» ՍՊԸ

Բուսաբանական փ. 14, Երևան, Հայաստան

Հեռ: +37410297229, 091423313, 091202304

Ֆաքս +37410200918

auditstar@mail.com

Աուդիտորական գործունեության լիցենզիա 015
տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարության կողմից 27.12.2002

“Մաքուր երկաթի գործարան” ԲԲԸ –ի բաժնետերերին,

Հարգելի բաժնետերեր,

Մենք աուդիտի ենք ենթարկել “Մաքուր երկաթի գործարան” ԲԲԸ (այսուհետ՝ “Ընկերություն”) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2009թ., նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ պարզաբանող ծանոթագրությունները:

Ընկերության ղեկավարության պատասխանատվությունը

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մենք իրականացրել ենք աուդիտը ՀՀ աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային ընթացակարգերի իրականացման միջոցով ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության և բացահայտումների ուսումնասիրում:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների,



ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ կատարված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մենք չենք կառավարել Ընկերության 2009թ. գույքագրման պրոցեսը և չենք մասնակցել դրան:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2009թ., ինչպես նաև նրա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի:

Աուդիտոր/տնօրեն


Ա. Մելքոնյան

Աուդիտոր

Ղ. Մուշեղյան

22 մարտի 2010թ.





**«ՄԱԶՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ
2009Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2010

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1) թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը,

Ընկերության գործունեության հիմնական տեսակը Ֆերոմոլիբդենի, մաքուր մոլիբդենի ջարդենի և կալիումի պերռենատի արտադրությունն է: Արտադրության հումքն Ընկերությունը ձեռք է բերում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերություններից՝ համաձայն այդ ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի: Այդ ընկերություններից են.

- «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոնքիմատ» ՓԲԸ (ՀՀ) - Մոլիբդենի խտանյութի գնում
- «ՆՕՁԷ Ի Լ» Ի ԱԻ (ՌԴ) - Ալյումինի փոշու գնում
- «Վ. Մինասյան» Տրեյդինգ կոմպանի (Իրան) - Ֆերոսիլիցիումի գնում
- ՕՕՕ «Русекспорт» (Վրաստան) - Երկաթե հրաթեփի գնում
- “Ферротрейд” (Ուկրաինա) - Ալյումինի փոշու գնում
- “ENERGY INVEST” (Վրաստան) – Հեղուկ ամոնյակի գնում

Հումքի ձեռքբերման գները սահմանվում են ինչպես նախնական պայմանավորվածության համաձայն, այնպես էլ տարբեր միջազգային բորսաներում ձևավորված ու ամսագրերում հրապարակված մետաղների գներով:

2009թ.-ին ընկերության արտադրության ծավալը կազմել է 19,843,936.7 հազ. ՀՀ դրամ կամ 54,705.7 հազ ԱՄՆ դոլար (1\$ = 362.74 դրամ) (տես Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ արտադրության ծավալը 2009թ.

<i>Արտադրվել է</i>	<i>2009թ. նկարագրությունը</i>			
	<i>Քանակը</i>	<i>Հազ. դրամ</i>	<i>Հազ. \$</i>	
Ֆերոմոլիբդեն	տն	2764.0	16,388,693.7	45,180.3
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	387.0	3,287,274.4	9,062.3
Կալիումի պերռենատ	կգ	151.5	167,968.6	463.1
ԸՆԴԱՄԵՆԸ			19,843,936.7	54,705.7

2009թ.-ին Ընկերության ամբողջ արտադրանքը արտահանվել է: Սպառող հիմնական Ընկերություններն են.

- “CRONIMET MINING GmbH” (Գերմանիա)
- “MELITA MANAGEMENT LIMITED” (Ուկրաինա)
- “MIDAS METALS INTERNATIONAL” LLC (Արաբական Միացիալ Էմիրություններ)

Իրացումը 2009թ.-ին կազմել է 18,707,127.7 հազ. դրամ կամ 49,574.9 հազ. \$ (տես Աղյուսակ 2).

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲԸ իրացման ծավալը 2009թ.

Իրացվել է	2009թ. նկարագրությունը			
	Քանակը		Հազ. դրամ	Հազ. \$
Ֆերոնիլրոդեն	տն	2874.0	15,348,203.9	40,603.7
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	400.0	3,358,923.8	8,971.2
Կալիումի պերոննատ	կգ	0.0	0.0	0.0
ԸՆԴԱՄԵՆԸ			18,707,127.7	49,574.9

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2009թ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-18,293,474.0
Իրացման ծախսեր	-5,266.0
Վարչական ծախսեր	-551,497.0
Գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)	-132,315.0
Այլ գործառնություններից շահույթ (վնաս)	-161,368.0
Այլ ոչ գործառնություններից շահույթ (վնաս)	2,730,279.0
Այդ թվում՝	
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	1,744,993.0
Ավանդի %	1,032,685.0
2009թ. շահույթ	2,436,596.0
Շահութահարկ	-259,170.0
2009թ. զուտ շահույթ	2,177,426.0
Հիմնական միջոցները 01.01.2009թ.	2,363,528.0
Հիմնական միջոցները 2009թ.-ին ավելացել են	188,512.0
Հիմնական միջոցները 01.01.10թ.	2,552,040.0
Կանոնադրական կապիտալը	690 930.0
Դեբիտորական պարտք	6,156,056.0
Կրեդիտորական պարտք	4,548,365.0

Հատկացումները բյուջեին հարկերի գծով

Անվանումը	Հազ. դրամ
Շահութահարկ	259,170.0
Եկամտահարկ	117,040.4
Հողի հարկ	340.0
Հողի վարձավճար	60.0
Գույքահարկ	2,904.0
Բնապահպանական վճարներ	17,314.0
Կենսաթոշակային ֆոնդ	166,201.6

Բյուջեի պարտքը Ընկերությանը 01.01.2010թ. կազմել է 2,267,966.0 հազ. դրամ
 Ընկերության պարտքը բյուջեին 679.0 հազ. դրամ:
 Աշխատավարձի ֆոնդը՝ 1,020,603.0 հազ. դրամ:
 Աշխատողների միջին ցուց. թիվը՝ 526 մարդ:
 Միջին աշխատավարձը՝ 162,723 դրամ:

Աղյուսակ 5

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	01.01.2010 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	31514.1
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	6.7 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	5.9 %
Զուտ շահույթի մարժա (NPM)	11.6 %
Կապիտալի համարժեքության գործակից	87.1 %
Ֆինանսական կախվածության գործակից	14.9 %
Բացարձակ իրացվելության գործակից	3.1
Ընթացիկ իրացվելության գործակից	4.5
Ընդհանուր իրացվելության գործակից	4.9
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2477.7
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	0.1
Պաշարների շրջանառելիության գործակից	7.9
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	46.1
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	4.0
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	92.0

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը պայմանավորված է համաշխարհային շուկայում տեղի ունեցող իրադարձություններով: Դրանցից է, օրինակ, մետաղների միջազգային գների փոփոխությունը, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության արտադրանքի գնի վրա: Մյուս ռիսկը արժուքային ռիսկն է: Քանի որ Ընկերության մի շարք պայմանագրեր գնանշված են արտարժույթով, այդ արտարժույթների փոխարժեքների տատանումները էական ազդեցություն են ունենում Ընկերության որոշ հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա:

2009թ.-ին միջազգային շուկայում մետաղների գները կտրուկ նվազեցին, որի արդյունքում Ընկերությունը տուժեց 2,197,123.0 հազ.-ով: Սակայն 2009թ-ի վերջում և 2010թ. սկզբին նկատվել են հումքի և արտադրանքի գների աճ:

2009 թ. չորրորդ եռամսյակում կատարվել է Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վերագնահատում, որի արդյունքում կատարվել է հաշվապահական ձևակերպումներ «Հիմնական միջոցներ» և «Ակտիվներին վերաբերող շնորհներ» տողերում՝ հողամասերի շուկայական արժեքների և կադաստրային արժեքների տարբերության չափերով: Ընկերության հողամասերը երկուսն են՝ Արցախի 73 (13,506 քառ. մ.) և Արցախի 75 (74,556.98 քառ. մ.) հասցեներով: Շուկայական արժեքները 1 քառ. մետրի համար կազմում են համապատասխանաբար 6,439.44 դրամ և 6,742.85 դրամ: Հողամասի կադաստրային արժեքը 1 քառ. մետրի համար կազմում է 3446.2 դրամ:

2) այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի

Ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս.

2009թ-ին Ընկերությունը ունեցել է 2,177,426 հազար դրամ գուտ շահույթ: 03.04.2009թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից որոշվել է մեկ սովորական անվանական բաժնետոմսի դիմաց վճարել 25 000 ՀՀ դրամ շահութաբաժին: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերությունը 2007թ.-ի համար վճարել է 40 000 ՀՀ դրամ շահութաբաժին իսկ 2006թ.-ի համար՝ 40 000 ՀՀ դրամ շահութաբաժին:

Ընկերությունը միջանկյալ շահաբաժիններ չի վճարել:

03.04.2009թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից որոշվել է Ընկերությանը պատկանող տարածքում իրականացնել շինարարական աշխատանքներ: Չնայած շինարարությունն իրենից ներկայացնում է լայնածավալ ներդրումային ծրագիր, այն չի կարող գերազանցել Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը և հանդիսանալ խոշոր գործարք:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 01.04.2009-05.05.2009 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունը ընկերությունում իրականացրել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում արձանագրվել է խախտում շահութահարկի (ներառյալ հարկային գործակալի կողմից պահվող (զանձվող)) գծով և տնտեսվարող սուբյեկտին առաջարկվել է տասնօրյա ժամկետում բյուջե փոխանցել 146,593.2 հազ. դրամ: Նշված գումարն ընկերությունն ամբողջությամբ փոխանցել է ժամանակին:

3) թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել: